

Կայացավ մարզպետին կից երիտասարդական խորհրդի հերթական նիստը

Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի մոտ նոյեմբերի 25-ին տեղի ունեցավ մարզպետին կից երիտասարդական խորհրդի հերթական նիստը: Մարզպետը խորհրդի անդամներին ներկայացրեց քննարկվող հարցերի օրակարգը, որի առաջին հարցը վերաբերում էր ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի հաստատմանը:

Խորհրդի անդամները նախապես ծանոթացել էին հայեցակարգին եւ իրենց դիտարկումներն արեցին որոշակի հարցերի շուրջ: Նրանք իրենց հարցադրումները ներկայացրին նաեւ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության՝ նիստին մասնակից ներկայացուցչին: Նշված առաջարկությունները կներկայացվեն նախարարություն՝ հայեցակարգում ներառելու նպատակով:

Քննարկվեցին նաեւ. „Ընտանիքի տարի,, ծրագրի շրջանակում համայնքներում „Ոսկե հարսանիք,, , „Անվանի գերդաստան,, միջոցառումների կազմակերպման, ինչպես նաեւ միջազգային կառույցների հետ համագործակցության հարցերը: Քաղաքային համայնքների ներկայացուցիչները պատրաստակամություն հայտնեցին մասնակցել „Երիտասարդական քաղաք,, մրցույթին:

Լսվեց նաեւ կազմակերպչական հարց, կատարվեց խորհրդի քարտուղարի ընտրություն եւ 1 փոփոխություն՝ խորհրդի կազմում:

Ամփոփելով նիստը, մարզպետ Սարգիս Սահակյանը նշեց, որ անդամների կողմից առավել ակտիվ գործունեության ակնկալիք ունի եւ իր հերթին պատրաստ է աջակցել նրանց կողմից բարձրացված հարցերի լուծմանը: